

Վիրիտի խնդրանք շատ հետազոտած է այս բանս թէ տեղեաց և թէ զորոց մէջ : Արդ, անագն կը բերուէր Պարսկաստանէն և մանաւանդ՝ ըստ Վիրիտի՝ Խորասանէն : Ստոյգ է, թէ մտերս Վ. Բելի գտաւ Գալաքէնոի գերեզմանոցին մէջ զուս անագէ խալխալայ (*anneau de jambre*) մի. նմանապէս սպիտակագոյն մետաղեայ զարդ մ'այլ զրտնուած է Արշաւորի գերեզմանոցին մէջ, որ հաւանորէն անագէ է. բայց այս առարկայքս կրնան ըլլալ միայն իրրեւ անհարթ անագ (*étain brut*) :

\*

Արշաւորի գերեզմանատեղեաց մէջ զրտնուած են պղնձեայ զեղարդունք, որոց բունի կամ կոթի Պատրիկն ծայրն պատուած է պղնձով : Այս զեղարդունքս ունին կարծ թիթեղներ և երկայն կոթառներ (*douille*) որոնք — պատկերաց ցուցածին համեմատ — գալարմամբ շինուած են և ոչ թէ ձուլմամբ : Դարձեալ, գտնուած են յԱրշաւոր պղնձի օդակներ կամ մանեակներ կեռաձեւ եզբօրք, անասնոյ զիւի կերպարանօք : Ըստ Վիրիտի, ասոնք կը զօրծածուէին աղեղներու լարերը պրկելու համար : Նոյն Արշաւորի գերեզմանատեղոյ մի մէջ զրտնուած երեք կծկած կմախքներու զլիսոց վերայ՝ գտնուած են կիսագնդաձեւ սաղաւարտներ՝ կոռաձեւ կանակներով : Վ. Բելի կը տարակուսի ասոնց սաղաւարտ լինելուն վրայ, սակայն Ռէօւէր կ'ըսէ, թէ այս կարծուած սաղաւարտներն առաջին շջափմամբ փշրեցան, որով կ'ապացուցուի, թէ ասոնք ամենանորք թիթեղներով շինուած ըլլան : — Ռէօւէր ուրիշ նորաբխտ սաղաւարտի մ'այլ նկարագիրը կ'ընէ, զարձեպ այս եւս կիսագնդաձեւ, դէպ ի ծոծրակը սնունդով թիթեղ մի, երեքթեւեան զարդ մանակով վեր բարձրացած, և զլիսոյն վերայ յովազ մի ձեւացուցած : Այս ոճով եօթը հատ սաղաւարտներ եւս գտնուած կարծուին Սախարլան լեռան վրայ, Գուլատակ կոյուած Հայոց գիւղի մը զիմաց, ձեռամբ Վահանայ Տատեան, որ Մեծարանց — Ս. Յակոբայ փարքին հայ արեղաներէն մին է :

\*

Դարձեալ, Արշաւորի մէջ գտնուած են այլ և այլ առարկաներ, ինչպէս կայիններ, երկժանիներ, պերճագարդ զօտիներ մարդու և անասնոյ կերպարանօք, զարդմանակներ, հայելիներ և այլն, զորս աւելորդ կը համարինք մանրամասն նկարագրել. փափաքողք կարող են փնտռել զայնս Հեղինակիս երկասիրութեան մէջ, միայն շմոռանանք ըսելու, որ այս գտնուած բոլոր առարկայքս՝ երկաթեղէն զարու զօրք են :



### Հ Ա Ր Ց Ա Ք Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ո Ւ Ս Ս Ն Ո Ղ Ա Ց

Մ Ո Ւ Ր Ա Ց — Հ Ա Մ Ա Ն Ա Ս Ր Ա Ն Ա Վ Ա Ն Վ Ա Ր Թ Ա Ր Ա Ն Ի Ն

Գ Ա Ւ Ո Ւ Ա Ց Ի



Պ Ա Ւ Ո Ւ Ա Ց Ի արքունի Համալսարանին քննութիւնք երկու շրջան ունին. առաջինն՝ ամառնային, ևսուշմանկան տարւոյնի տւարտման ատեն, իսկ երկրորդն՝ աշնանային, յաջորդ ուսումնական տարւոյ շրջանն սկսելէն առաջ. վերջինս կ'աւարտի նոյեմբերի կէսին : Աշնանային շրջանի ժամանակ կը ներկայանան այն աշակերտք՝ որք կամ ամառնային շրջանի ատեն չեն ներկայացած, և կամ ներկայանալով՝ անյաջող քննութեան ենթարկուած են : Այն մէկ ճիւղի մասնագիտական ուսման քննիչ յանձնախումբը կը կազմուի երեք անգամներէ, որոց մին՝ քննիչի նիւթին սեսուցիչը կը լինի, իսկ միւս երկուքը Համալսարանի բնգհանրական Տեսչէն կը նշանակուին :

Իւրաքանչիւր ուսանողի հարցաքննութիւնն ընդհանրապէս քսան վայրկեան կը տեւէ :

Քննութեանն անմիջապէս վերջը յանձնախումբը վճիռ կու տայ ամէն մի աշակերտի քննութեան յաջող կամ անյաջող ելքին վրայ, իմացընելով իրեն ընդունած թիւը :

Իւրաքանչիւր քննիչ անգամ տար միութեանց տրամադրութեան իրաւունք ունի :

Քննութիւնն յաջող համարուելու համար՝ պէտք է որ քննեալն ստանայ յանձնախումբին տրամադրելի միութեանց ամբողջութեան (30 թիւ) զէթ վեց տասներորդն (18 թիւ) : Իսկ ինը տասներորդ (27 թիւ) և կամ անկից բարձր թիւեր (28, 29, 30 թիւեր) ստացողն՝ ազատ կը համարուի յաջող տարւոյն համայնարանական տուրքերու հատուցմանն :

— Գերազոյն թուոյ աստիճան է տասը տասներորդ (30 թիւ), հանդերձ հրապարակական զովասանութեամբ ուսանողին :

Այս թիւերը սովորաբար առանց միջին հաշույ կը գործածուին հետեւեալ կերպով .

1—17... Աստիճան անյաջող քննութեան .

18—26... Աստիճան յաջողակ քննութեան .

27—30... Աստիճան ամենայնող քննութեան և ապահարկի .

30 \* ... Աստիճան գերազոյն թուոյ, ապահարկի և հրապարակական գովեստից :

\* \*

Մուրատեան Համայնարանական վարժարանիս Ուսանողաց 1896—1897 ուսումնական տարեշրջանի մէջ սովորելիք նիւթերն էին հետեւեալներն .

Ր Ժ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Կ Ն Ո Ւ Ո Ղ Ա Յ

Պարտաւորիչ Ուսանողք

1. Անկամազննութիւն և կանոնաւոր հիւստածաբանութիւն :

2. Բնաբանութիւն :

3. Տարբարանութիւն ընդհանրական :

4. Կենդանաբանութիւն :

5. Անկամազննական փորձատեթիւնք :

Ազատական Ուսանողք

1. Մանրադիտութիւն տեսական և փորձատական, հանդերձ հիւստածաբանութեան փորձերով :

2. Տարբարանութիւն աննկատական նիւթոց :

3. Ուսումն մանրադիտակայլին որդանց (Bacteriologia, Ճոկանաբանութիւն) :

4. Տարբարանութիւն բնաբանական :

5. Տարբարանութիւն գործաբանական :

ԵՐԿՐԱԶԱԺ — ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՂԱՅ

1. Բարձրագոյն գրահաշիւ և փորձք :

2. Երկրաշափութիւն վերլուծական, փորձառութեամբք :

3. Երկրաշափութիւն ստուերազծական և փորձք :

4. Տարբարանութիւն ընդհանրական և փորձք :

5. Գծազրութիւն զարգուց և ձեւոց տարրական ճարտարապետութեան :

Ազատական Ուսանողք

1. Կորագիծք և մակարդակք երկրորդ կարգի :

2. Յաւելուածք ստուերազծական և վերլուծական երկրաշափութեանց :

3. Տարբարանութիւն բնաբանական :

4. Ուսումն ընդօրինակութեան :

5. Պատմութիւն շափաբերական գիտութեանց :

Ազատակամ ուսմանց դասառութիւնք կ'ընտրուին Ուսանողաց յօժարութեամբ՝ Համալսարանի վարչութեանն տրամադրուած Ազատակամ դասառանդոտքեանց ցոցակէն, և այս կարգի ուսմանց մէջ Ուսանողք քննութիւն տալու պարտաւորութիւն չունին . մինչդեռ Պարտաւորիչ դասառանդոտքեանց համար պէտք է քննութիւն տան կամ ամէն մէկ տարւոյն վերջը՝ մասն առ մասն, և կամ ուսման ամբողջական շրջանին աւարտելու ստեն՝ ամբողջապէս :

Մուրատեան Համայնարանական վարժա- | Զանուժ իւրաքանչիւր Ուսանողի քննութեանց  
 րանիս՝ ուսումնական 1896-1897 տարեշրջը | մէջ ընդունած թիւերն հետեւեալներն եղան.

| Առաջին տարի<br>Թ Շ Կ Ո Ւ Թ Ե Ա Ն            | Կենդա-<br>նաբանու-<br>թիւն | Բնաբա-<br>նու-<br>թիւն | Բուսա-<br>բանու-<br>թիւն | Տարրա-<br>բանու-<br>թիւն | Մէջին<br>թիւ |   |
|---|----------------------------|------------------------|--------------------------|--------------------------|--------------|---|
| ՄԱԿՈՐԵԱՆ ՊՐ. ՏԻԳՐԱՆ<br>Աշէքսանըրապօլսեցի    | 27                         | 30                     | 27                       | 30                       | 28-50        | Ատօրեան ամենա-<br>յաջող քննութեան<br>և ապահարկի |
| ՄԵՅԵԼԵԱՆ ՊՐ. ՅՈՎՀԷՆՆԵՍ<br>Կոստանդնուպօլսեցի | 26                         | 27                     | 29                       | 28                       | 27-50        | Ատօրեան ամենա-<br>յաջող քննութեան<br>և ապահարկի |
| ՄԵՆԱՍԵԱՆ ՊՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ<br>Կոստանդնուպօլսեցի | 30                         | 30                     | 30                       | 30                       | 30.—         | Ատօրեան ամենա-<br>յաջող քննութեան<br>և ապահարկի |
| ՍԱՓԱՐԵԱՆ ՊՐ. ՄԻԳՆԵԼ<br>Տփղիսեցի             | 30                         | 30                     | 28                       | 27                       | 28-75        | Ատօրեան ամենա-<br>յաջող քննութեան<br>և ապահարկի |

| Առաջին տարի<br>Ե Ր Կ Ր Ա Ձ Ա Փ<br>ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ | Գրաչա-<br>շիւ<br>բարձրա-<br>գոյն | Երկրաչա-<br>փութիւն<br>ստուե-<br>րագծա-<br>կան | Երկրաչա-<br>փութիւն<br>վերլու-<br>ծական | Տարրա-<br>բանու-<br>թիւն | Մէջին<br>թիւ |   |
|--|----------------------------------|--|---|--------------------------|--------------|---|
| ԱՋԱՐԵԱՆ ՊՐ. ԱՐՏԱՇԵՍ<br>Կոստանդնուպօլսեցի           | 30                               | 27   | 30                                      | 30                       | 29-25        | Ատօրեան ամենա-<br>յաջող քննութեան<br>և ապահարկի |
| ՈՆՆՃԵԱՆ ՊՐ. ՅԱԿՈՎԵ<br>Կոստանդնուպօլսեցի            | 28                               | 27   | 15*                                     | 29                       | 24-75        | Յաջողակ թիւեր                                   |
| ՊԱՄՄԱՃԵԱՆ ՊՐ. ՄԿՐՏԻՉ<br>Աղբիանուպօլսեցի            | 24                               | 27   | 15*                                     | 30                       | 24.—         | Յաջողակ թիւեր                                   |

\* Վերլուծական Երկրաչափութեան ուսումն երկամեայ ընթացք ունենալով՝ 18 թիւէն նուազ ընդունողք, առանց տարի կորուսանելու, կարող պիտի լինին յաջորդ տարւոյն ըն-  
 թացից մէջ մտնել. բայց պարտաւորեալ են տարւոյն վերջը՝ նոյն ուսման նաեւ նախընթաց  
 տարւոյն քննութիւնն ալ կրկնելու:

Ուսումնական տարերջընտի մէջ Մուրատեան Համալսարանական վարժարանէս մեկնեցաւ Պր. Աղեքսանդր Ալեքսանդրեան Տփղիսեցի, ուսանող առաջին տարւոյ երկրաչափական ճարտարապետութեան :

Ինչպէս վերոյգրեալ թիւերէն կը տեսնուի՝ Մուրատեան սանուց մեծամասնութիւնը քաջափայլ հանգիստանալով իրենց առաջին տարւոյ քննութեանց մէջ, վստահութիւն կ'ազդեն նոյնպէս գտնուելու նաեւ յաջորդ տարւոյն քննութեանց ժամանակ, ի զոհութիւն նախ իրենց որտի, և ապա իրենց ընտանեաց և վարչութեան վարժարանիս, և առիթ միւթարութեան յուսագնելոյ ազգիս :

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Մ. Համալսար. վարժարանին



Կ Ա Տ Ա Ր Ե Ա Ա Ի ա յ Վ Ե Ի Ջ Ա Ի Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ա Շ Ի Ա Ր Հ Ա Ք Ա Ր Ի Մ Է Ջ



Ցոցեցեմ և հարցեմ բայից խոնարհման վրայ ուղղագրական դիտողութիւններս հիւրընկալելով պատ. Բաշմալի անցեալ դեկտ. թուոյն մէջ, զիտել տուած էք, հարցայ կատարեալին առթիւ, զոր ներկայացուցեր էի, թէ այ վերջաւորութիւնը « թէ հին և թէ նոր ընդհանոր լեզուի մէջ կրատրական է՝ հարցայ, հարցուեցայ, և այլն. իսկ ներգործականը կը վերջանայ ի, հարցի, հարցուցի »: Ուստի կ'առաջարկէք ներգործարար ստել « հարցի, հարցեր, կամ հարցիտ, հարցիք, հարցիմ »: Կը խնդրեմ ձեր ուշադրութիւնը հետեւեալ կէտերուն.

1. Խօսիմ, իմանամ, և այլ ներգործական բայերու կատարեալներն, խօսեցայ, իմացայ, զրաբարին մէջ ներգործական ալ են, կրատրական ալ. ուրեմն այ կրատրական կերպ կոչուած ձեւը իբրեւ ներգործական ի

կիր կ'անուի նոյն իսկ գրաբարի մէջ. ինչն շտանուի նաեւ աշխարհաբարի մէջ :

2. Այ կրատրակերպ ձեւը իրօք աշխարհաբարի մէջ ընդունուած է իբրեւ ներգործականի ձեւ, նաեւ իբրեւ չէզոքի: Օրինակի համար, տեսնեմ, գտնեմ, գիտեմ կամ գիտամ, մոռնամ, աղամ բայերու կատարեալներն են տեսայ, գտայ, գիտցայ, մոռցայ, աղցայ, մոռնեմ, ելնեմ, հասնեմ՝ չէզոք բայերունը՝ մտայ, ելայ, հասայ : Քանի որ այսպիսի կատարեալներն ընկալեալ և հաստատուած են, և Բաշմալի ինչն ալ կը գործածէ զայնս, հարկ չկայ հարցի, հարցեր, և այլն ստել, որպէս թէ հարցայ, հարցարը զարտուղութիւն մը եղած լինէր : Եթէ հարկ է հարցի գրել, հարկ է նաեւ տեսի, գտի, ելի, մտի, հատի ուղղագրել, ինչ որ անգործական է :

3. Հարցայ, հարցար, հարցաւ, հարցանք, հարցան՝ կատարեալի ձեւը ես չեմ յօրինած և չեմ առաջարկեր զայն իբրեւ նորութիւն, այլ իբրեւ արդէն կայ և գործածածական է աշխարհաբար Ալիին զուտաարարբառին մէջ, և ես բացարձակապէս կ'երաշխտուրեմ ստոր իրականութեանը :

Վստահ եմ որ, եթէ Բաշմալի խմբագրութեան բանաւոր երեւնալով այս ներկայացում՝ հարցայ պարզ ձեւը գործածէ, իւր օրինակին պիտի հետեւին բոլորք\* :

Մ. Ս. ՉԱՐԻԻԼՆԱՆ

Նիս Երոք

\* Այդ մասին նոյն է գործեալ մեր համազուն, քանի որ զայն փոխելու բաւական փաստեր չենք գտներ: Առանց հարկի՝ յանկարծոյն օրէնք մի սահմանել եւ այնոր զործադրութիւնը պահանջել, այդ զործ է գերազանց հեղինակութեան մի զոր շունի « Բաշմալիցայն, կարծեմ եւ ոչ ոք: Բան մի որ օրէնքով հաստատուած է, օրէնքով եւս կը վերջուի կամ փոփոխուի. այդ օրէնքն սոսկանաց ձեռքը չէ, այլ հաստատուած օրինագրքին մէջ, իւր յատուկ սահմաններով ամփոփուած. մեր խնդրոյն մէջ՝ քերականութիւնն է այդ, որով հրամաններու հաստատելն՝ լեզուն խանգարել ըսել է: Գարծեալ, ո՛ր եւ է փոփոխութեան մէջ առաջին դիտելի պայմանն է շատագոնին պէտքը: Սա